ունի զհին գաւառն Սիւնեաց զԲԱՂՔ՝ որ յետոյ ԱՃԱՆԱՆ և ՔԱՋԱՈՒՆԻՔ կոչեցաւ, զԿՈՎՍԱԿԱՆ կամ Կուռափան (ԳՈՒՐՀԱՄ և ԿԵՆԱՈՒԶ), զԱՐԵՒԻՔ (Տաւշօն և Մէղրի), զՁՈՐՔ (Ղափան) և զմասն Ծղկայ ՚ի սահմանակցութեան Երնջակայ, որոյ ըստ հարաւոյ կան Խաղանճէւ լերինք, և ՚ի հարաւոյ սոցա Աւանճէւ լերինք յորոց բղխէ Զանկըզուր գետ և յիւր անուն կոչի երկիր խաղից նորա, որպէս և ՊԱՐԿՈՒՇԱՏ կամ Բարկիւշատ վիճակ յելից նորա՝ ըստ իւրումն գետոյ։ Բազում նշանաւոր տեղիք են ՚ի գաւառիս և անցք բազմադիմիք անցեալ ՚ի սմա, քանզի աթոռ մեծազահ իշխանաց Սիւնեաց էր և արքեպիսկոպոսի նոցա կամ մետրապօլտի. և ցարդ կանգուն կայ և շէն աթոռս այս եկեղեցական ՚ի ՏԱԹԵՒ կամ Սաթեւ գեղջ յելից Խազանկելայ, յեզր գետակի որ ՚ի լերանց անտի իջեալ ՚ի խոխոմս քառաժեռից մեծաձայն դնդչմամբ անկանի ՚ի գետն Որոտան ՚ի հարաւոյ նորին, որ է յաջմէ. մենաստանն անուանի ՚ի սարահարթի ուրեմն կայ իբրու կիսով մղոնաւ հեռի ՚ի գեղջէն, շինեալ յԵւստաթեայ աշակերտէ Թադէի և պատուեալ ՚ի Գրիգորէ Լուսաւորչէ և ՚ի Թարգմանչացն, և անդ հաստատեալ յԸ կամ յԹ դարու արքեպիսկոպոսական աթոռոյն Սիւնեաց. որով ՚ի հնուց մինչև ցայժմ նախապատիւ գտանի քան զյոգունս յաթոռոցն Հայոց, և իբրև ուխտատեղի վասն մասին կենարար փայտին յոյժ պատուի, և Ս. Խաչ ևս կոչէր ՚ի հնումն. բազում անգամ մեծակառոյց շինուածովք նորոգեցաւ տեղին, նախ յելս Թ դարու ՚ի ձեռն Յովհաննու արքեպիսկոպոսի, և ՚ի նուակատիս նորին եկին Սմբատ արքայ և կաթողիկոսքն Հայոց և Աղուանից, ապա յԺԲրդ ՚ի Սենեքերիմայ արքայէ. յետոյ յելս ԺԳ դարու ՚ի Տարսայիճայ Օրբելեանց և յորդւոյ նորա Յովհաննէ մետրապօլտէ. յելս ԺԴ դարու և ՚ի սկիզբն ԺԵին անուանի էին անդ Յովհաննէս Կախիկ Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի վարդապետք։ Մենաստանն համակ քարաշէն է քառակուսի, և եկեղեցին հոյակապ ՚ի միջի, արձանաւ յիշատակի Տարսայիճայ, և զմնգակատամբ շինելով ՚ի Յովհաննէ Որոտնեցւոյ. որք նոր նորոգեցան յետ նուաճելոյ Գարապաղու ՚ի Ռուսաց, զի ՚ի պատերազմաց Պարսից և ՚ի բռնաւորաց աղարտեալք էին. և հաստատեցաւ վարժարան ջանիւք առաջնորդին և միաբանիցն։ Ի գեղջն Տաթև են իբրև 100 գերդաստանք Հայք, յորս և սերունդք Օրբելեանց մելիքք։

172. Մերձ է ՚ի Տաթև ՚ի մօտոյ հիւսիսոյ Շնհեր գիւղ հին Շնհերս կոչեցեալ, և յերինմին Շահանդուխ խորաձոր, յանուն գաւեր իշխանին Աղուանից, որ մինչ ՚ի հարմնութեան երթայր ՚ի ձի նստեալ (յԻ դարու) յահէ ապստամբ յափշտակչաց՝ վազեաց ՚ի գահէ ձորափին յանդունդս երիվարաւն հանդերձ և ողջ մնաց, վասն որոյ և անդէն ճգնաւորեցաւ զամենայն կեանս իւր, շինեալ խրճիթս, և կոչեցաւ գահն՝ Հարնաջաղ։ — Հուպ ՚ի խառնուրդս Տաթևայ ջրոյն յՈրոտն կամ ՚ի Պարկուշատ կայ Հարանց անապատն ընդարձակ տեղի մենաստանաց ճգնաւորաց շինեալ յԺԷ դարու, յետ կործանման հնոյ Հարանց անապատին շինելոյ ՚ի սկիզբն դարուն ՚ի Սարգսէ ճգնակեր եպիսկոպոսէ։ — Ի մօտոյ հիւսիսոյ սորա կայ Լոր կամ Լոր գիւղ ստորերկրեայ տամբք և հոյակապ եկեղեցեաւ, առ գետակի միոյ՝ Գինաջան կոչեցելոյ ՚ի հնումն. յարոյ արևմտից հիւսիսոյ մերձ ՚ի գետն Որոտան և ՚ի Բռնակոթ՝ կայ Շաղաթ տեղի անուանի ՚ի ԾՂՈՒԿ գաւառի, որ էր աթոռ իշխանաց Սիւնեաց և եպիսկոպոսի, յայրեաց յաւեր դարձուցեալ ՚ի Շապհոյ յելս Դ դարու առ վրէժ քինու նախարարին Անդովկայ, որոյ որդի Բաբգէն՝ հայր ուրացելոյն Վասակայ՝ վերստին շինեաց զտեղին, գտեալ զպատառ սրբութեան զոր հօր նորա թաղեալ էր հողաբլրով. այժմ անշքացեալ է գեօղն, բնակեալ յ՚30 տանց Հայոց գաղթելոց ՚ի Խոյէ Պարսից (104)։ — Յահեկէ գետոյն Պարկուշատայ առ վտակաւ փոքու կայ Որոտն գեօղ, մի յամրոցաց Հայոց առ Արշակունեօք. պայծառացաւ յելս ԺԴ դարու, յորում Յովհաննէս Կախիկ վարդապետ շինեաց զՍ. Կարապետ վանս որ և Կարմիր վանք. անուանի գտաւ Որոտն և ՚ի սկզբան անցելոյ դարուն ՚ի մարտս Ղափանեցւոց. բայց այժմ անշքեցեալ են և գեօղն և մենաստանն։ — Ի հարաւոյ վտակին Որոտնայ կայ Գորայակ գեօղ թաթարաբնակ կաւակերտ պարսպօք. և յերի նորա Անապատ Կոռնաոյ կամ Անապատածնի։ Մերձ կայ և Հալիձոր գեօղ և բերդ, յորմէ էր Տէր Աւետիք զօրավար Դաւթի բէկի առաջնորդի Ղափանեցւոց քաջաց, և փարսադան մելիք իշխան. կայ և մերձ ՚ի սա Անապատ կուսանաց։ — Յելից Տաթևու ՚ի սեպացեալ քարաբլրի ուրեմն կայ հզօրագոյնն ամրոցաց Սիւնեաց Բաղաբերդ կամ Բաղակայ քար, շինեալ ՚ի վաղ ժամանակս, զոր ոչ կարաց առնուլ Շապուհ արքայ Պարսից, և ապաւէն էր ամենայն երկրին Սիւնեաց ՚ի հնումն և ՚ի միջին դարս, առ նորովք թագաւորօք Բաղաց և Ձորոց. այլ յԺԲ դարու տիրացան նմին այլազգիք, և ՚ի յետին դարս խուկ ամրութեամբն պիտանի և անուանի եղև։ Ի ստորոտս Բաղաց բերդի կառուցաւ անուանի մենաստանն Վահանավանք ՚ի սկիզբն Ժ դարու ՚ի Վահանայ յորդւոյ իշխանին Բաղաց, և յեղբօրորդւոյ նորա Վահանայ որ ապա կաթուղիկոս եկաց Հայոց. և բազում արքայազանց գամբանք են անդ։

173. Յելից Բաղակայ ՚ի Ձորք գաւառի կայր ԿԱՊԱՆ ամուր մայրաքաղաք նորոց թագաւորաց Սիւնեաց կամ Բաղաց և Ձորոց ՚ի ԺԱ դարու, որք ունէին ըստ պատմչին “ Բերդս 43, վանորայս 28, և գեօղս 1400 ”. յամին 1103 Չորթման Պարսիկ կալաւ և աւերեաց զքաղաքս՝ ոչ կարացեալ տիրել բերդին. որ ոչ գիտեմ այժմ զիարդ իցէ. բայց յանուն նորին կողմանքս համօրէն ՂԱՓԱՆ կոչին։ — Ի հարաւակողմն գաւառիս ՚ի հինն Արևելս գլխաւոր տեղի է ՄԵՂՐԻ աւան հայաբնակ մերձ յԵրասխ և ՚ի Կարճեւան (156) առ համանուն վտակաւ, ՚ի բարձու 1500 ոտից, տրոհեալ յերկուս մասունս, մին Գանձափարախ և միւսն Սէաչէան կոչեցեալ. յերկոսին ևս են ամրոցք և եկեղեցիք. և մերձ նմին Ս. Յովհաննէս վանք։ Յարևմտից Մեղրեայ ՚ի սահմանս Կարճեւանայ են անուանի քարավազքն Երասխայ ընդ զառիվայր վախուստ և ժայռուտ երկիր իբրև 400՛. և ՚ի բովանդակ